

Աղուանից կաթողիկոսութեան ստեղծման հանգամանքների հարցի շուրջը

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲԵԱՆ

Հայ ժողովրդի պատմութեան վաղ-միջնադարեան շրջանի քիչ ուսումնասիրուած, կամ աւելի ճիշդ, անբաւարար պարզաբանուած հարցերի մէջ իւրապատուկ տեղ է դրուում Հայ Առաքելական եկեղեցու կեանքը, իսկ այստեղ էլ նրա մի թելի՝ Աղուանից կոչուած եկեղեցու նուիրապետութեան ստեղծման պարագան: Վերջինս՝ առաջին պահ, մանաւանդ շնախապաշարուած հայեացքի համար, պարզ է ու հասկնալի, սակայն ըստ էութեան դարձել է խճճուած մի կծիկ, քանի որ հետազօտողներն ամէն անգամ հարցին մօտեցել են ոչ թէ առկայ աղբիւրադիտական նիւթը համապարփակ քննութեան ենթարկելու պատրաստակամութեամբ, այլ այդ նիւթը դոյուլիւն ունեցող շնախապաշարումներին ու մակերեսային պատկերացումներին յարմարեցնելու միտումներով: Եւ, ցաւօք, այնպիսի պատկեր է ստացուել, որ հարցն այժմ առաւել մութ ու խճճուած է, քան այն ժամանակ, երբ դեռ չէր ենթարկուած ոչ մի քննութեան կամ ուսումնասիրութեան:

Բացի այն դէպքերից, երբ ուսումնասիրողները Հայ ժողովրդի ու հայոց եկեղեցու պատմութեան դրուագները քննելիս իրենց կարծիքներն են յայտնել Աղուանից կաթողիկոսութեանը վերաբերող հարցերի առթիւ, այդ կաթողիկոսութեան պատմութեան շուրջ հետազօտութիւններ են կատարել կամ իրենց ուսումնասիրութիւններ

բում Աղուանից եկեղեցու նուիրապետութեանը յատուկ գլուխներ են նուիրել Ս. Զալալեանցը, Յովհ. Շահխաթունեանցը, Մ. Բարխուտարեանցը, Մ. Օրմանեանը, Ն. Ալիսնանը եւ Ա. Տէրոյնցը (1) :

Սկիզբից եւ եթ ասենք, որ յիշեալ բոլոր հետազոտողներն էլ Աղուանից կաթողիկոսութեան հին շրջանի (հնազոյն ժամանակներից մինչև 10-րդ դ․) պատմութեան համար հիմնական աղբիւր են ընդունել Մովսէս Կաղանկատուացու անունով յայտնի, սակայն չարայարող Մովսէս Դասխուրանցու գրչին պատկանող «Աղուանից Աշխարհի Պատմութիւնը» : Ամէն պարագայի՝ այդ երկի ներկայացրած կաթողիկոսաշարն է հիմք հանդիսացել Աղուանից կաթողիկոսների ցանկերի համապատասխան մասը կաղմելիս : Ծիշք է, Դասխուրանցու այդ կաթողիկոսաշարի առանձին օղակներ ենթադրուել են քննադատութեան դեռևս մեր միջնադարեան մատենագիրների կողմից (2) : Սակայն կաթողիկոսաշարն ընդհանրապէս, իսկ նրա ակունքները մասնաւորապէս՝ երբեք կասկածի տակ չեն առնուել :

1. Ս. արքեպս. Զալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Ա. մաս, Տփղիս, 1842, Բ. մաս, Տփղիս, 1858 : Յովհ. եպս. Շախխաթունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի եւ Հինգ Գուռոց Արարտայ, Բ. հտր. Լյւբլա-ծին, 1842, էջ 333-344 : Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, Ա. հտր., վաղաքաղատ, 1902. Բ. հտր., Թիփլիս, 1907 : Մ. արքեպս. Օրմանեան, Աղջապատու, Ա. Գ. հտր., Պէրլուք, 1959-1961 : Ն. Ալիսնան, Մովսէս Դասխուրանցի (Կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970, էջ 152-240, 269-378 : Ատուր Տերոյնց, Հայոց Քուականն ու Տոմարգիր Հայրապետը, Աղուանից հայրապետներու ժամանակագրական ցուցակին եւ իշխանաց ստեմացոյցին յաւելածով, պատմական ու քննական ուսումնասիրութիւն (ձեռագիր), (տես՝ Նոյնի Զարեմցի ամուսն Գ. Ա. Թ., Ա. Տերոյնցի դիւան, վաւերագիր քիւ 1) : Նման մի ձեռագիր էլ պահպանուել է Մշտոցի ամուսն Մատենադարանում : Տեղագրուած է Ալ. Նրիցեանի դիւանի քիւ 157 քաղապանակում (վա. քիւ 1, 19 մեծագիր քիւրք՝ գրուած երկու էջով) : Սակայն դժուար է որոշել հեղինակի ով լինելը : Այն համբաւանալից մի ուսումնասիրութիւն է՝ Յուրիուս Աղուանից կաթողիկոսութեան Գամաասարի շրջանին, սկսած 1450-ական քուակամներից, եւ աւարտուել է՝ 1779 թ. հակաքոռ երկու կաթողիկոսների կռիւների մկարգութեամբ :

2. Յիշեալ կաթողիկոսաշարն, առանց աւարկութեան, առաջին անգամ կրկնել է Մխիթար Գոշը (տես՝ Մխ. Գոշ, Կաթողիկոսք եւ Դէպք Աղուանից Աշխարհին ի Մէջ ԺԲ. Դարու, Դ. Ալիշան, «Հայապատում», Բ. հտր., Վենետիկ, 1901, էջ 384-385) : Սակայն նրա մասին խօսող մեր յաջորդ պատմիչը՝ Կիրակոս Գամաակեցիին մկատել է որ ցանկի առաջին ամուսններից մէկը՝ Շուփեղիշան գտնուել է անյարմար տե-

Ընդհանուր առմամբ յայտնի են հետազոտողների բոլոր փորձերը՝ քննելու Աղուանից կաթողիկոսութեան վաղ շրջանի վիճակի հետ կապուած հարցերը: Եւ չդիտենք ոեւէ դիտնականի, որ կասկածի տակ առած լինէր Մովսէս Գասխուրանցու կողմից ներկայացուած Աղուանից առաջին կաթողիկոսների (1—4-րդ դդ.) ցանկը: Ընդդէմ է, ոմանք կաթողիկոսաչարի առանձին օղակները վերաբերութեամբ բաժանել են մեր մատենադրութիւնից եկող թերահաւատութիւնը: Սակայն նման թերահաւատութիւն, առաւել եւս՝ ժխտողական վերաբերմունք, երբեք չի տարածուել ամբողջ ցանկի վրայ: Եւ ահա Ս. Տ. Երեմեանը, թէպէտ եւ թուուցիկ, սակայն որոշակի ու կտրական իր կարծիքն է յայտնել տուեալ ցանկի անհիմն լինելու մասին: Անմիջապէս նշենք, որ միանգամայն իրաւացի է դիտնականը, երբ պնդում է, թէ Չողում հնուց ի վեր, իբր թէ, գոյութիւն ունեցած Աղուանից կաթողիկոսութեան վարկածը «չի համապատասխանում պատմական իրականութեանը» (3):

Ս. Տ. Երեմեանի այս կարծիքը ժամանակին ընդունել եւ պաշտպանել է Մ. Ի. Արտամոնովը՝ դանելով, որ Չողի եպիսկոպոսական աթոռը կաթողիկոսական է վերածեւուել զրոյցի մէջ (4):

զում եւ այդ առիւ գրել է. «... վասն այսորիկ յառաջ կարգելոյ՝ երկմտութիւն գայ մեզ. զի որ գրեաց զպատմութիւնն Աղուանից, զայս ամուս կարգէ յաւուրս վաչագամայ Բարեպաշտի լեալ...» (Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, Երևան, 1961, էջ 194):

3. Ս. Տ. Երեմեան, *Աղուանի Գաղափարախօսութիւնն ու Մշակոյթը*, Գ-է. դդ., «Ակնարկներ Գ-Ք. դդ. ՍՍՀՄ-ի Պատմութեան, Մասկուս, 1958, էջ 324 (առւերէմ): Այստեղ գիտնականը լայն տարածում գտած վարկածի կաթողիկոսամետ է համարում «Չոր կամ Չոլա քաղաքը, Դերբենդից հարաւ», որ կարիք ունի նշգրտուելու. Չորը եւ Դերբենդը մոյմ քաղաքի տարբեր անուններն են: Ապա՝ կարծում է՝ Չողը կաթողիկոսամետ է յայտարարուել այն ճշգրտակալով, չորպէսզի սուրբ լուսապատկով շրջապատուի այն տեղը, ուր ճեհատակուել է սուրբ Գրիգորիքը» (Նոյնը): Սակայն Գրիգորիքը ճեհատակուել է ոչ թէ Չողում (Դերբենդ), այլ՝ վատնեան դաշտում: Եւ տարածուած այդ յաւակնուտ վարկածը հիմնականում ունեցել է Աղուանից եկեղեցին ըստ հնարարին բարձրացնելու, առաջնակամ (եղիշէ «առաջնալի» կողմից հիմնադրուած) լինելը հաստատուել կէտ-ճշգրտակալ:

4. Մ. Ի. Արտամոնով, *Կապարների Պատմութիւն*, Լենինկրատ, 1962, էջ 124 (առւերէմ): Այստեղ հեղինակը կրկնում է Մաեւ Ս. Տ. Երեմեանի պնդումն այն մասին, թէ Աղուանից կաթողիկոսութիւնն ստեղծուել է «Դուիմի 551 թ. ժողովից յետոյ, երբ միաբնակ եկեղեցին վերջնականապէս ասեմանագատուել էր բիզանդական քաղկեդանական եկեղեցուց» (Ունը, էջ 124-125, հմմտ. Ս. Տ. Երեմեան, 52.

Այժմ տեսնենք, ո՞րն է Աղուանից կաթողիկոսութեան առաջին գահակալների ցանկը՝ ըստ պատմիչ-շարադարողի, որո՞նք են այն աղբիւրները, որ նա է վկայակոչում ի հաստատումն իր ցանկի, եւ որքա՞ն են իրար համապատասխանում յիշեալ ցանկի մանրամասներն ու վկայակոչուած աղբիւրների տեղեկութիւնները:

Բացի առանձին բաղձաթիւ դէպքերից, երբ «Աղուանից Աշխարհի Պատմութեան» առաջին զբաղում Աղուանքի կաթողիկոսներն են յիշուած Եղիշէից (Քարողիչ, Ա. դար) մինչեւ Աբասը (552-596 թթ.)՝ թուով 14 հոգեւորական, «Պատմութեան» վերջին դուրսը նուիրուած է անուանց «Հայրապետացն Աղուանից», որոնց առաջին 14-ը ներկայացուած են հետեւեալ կարգով.

«Աուրբն Եղիշայ՝ աշակերտ սուրբ առաքելոյն Քաղէօսի, որ ձեռնադրեցաւ յերուսաղէմ ի ձեռաց սրբոյն Յակոբայ: Սա եկն լուսաւորիչ երից աշխարհացս՝ Չորայ, Լիւնաց եւ Աղուանից, եւ ի սոյն կատարեցաւ վկայութեամբ:

«Աուրբ մանուկն Գրիգորիս՝ թոռն սրբոյն Գրիգորիս Լուսաւորչին Հայոց:

«Աուրբն Շուխհաղիշա Աղուանից արքեպիսկոպոս:

«Տէր Մատթէոս:

«Տէր Սահակ:

«Տէր Մովսէս:

«Տէր Պանդ:

«Տէր Ղազար:

աշխ., էջ 321): Յայտնի է, սակայն, որ հայոց եկեղեցու օտարմատումը բիզանդական ֆազիկեղոնականութիւնից տեղի է ունեցել Դուիմի յիշեալ ժողովից աւելի առաջ: Ճիշդ է, Գաղկեղոնի ժողովին (451 թ.), շատ հասկնալի պատճառներով չէին մասնակցում հայերը եւ ժողովից յետոյ էլ տասնամեակներ շարունակ չէին կարողանում իրենց վերաբերմունքն արտայայտել մրա մկատմամբ: Սակայն 480-ական բուականներին այն դատապարտեցին եկեղեցական մի շարք գործերով, ապա 506 եւ 507 թթ. Դուիմի ժողովներում, Բաբելէն կաթողիկոս Ա. Ոքմեցու գլխաւորութեամբ, դատապարտեցին մայն երկարմանութեամբ հիմք մետոքականութիւնը, ապա՝ եւ ֆազիկեղոնականութիւնը (տես՝ «Թուրք Հայոց ի Պարսս, առ Ուղղափառս» վերնագրով երկու մամակները. Գրքք Թղթոց, էջ 41-51: Նաեւ տես՝ Մ. Օրմամեան, Ազգապատմ., § 328-343): Իսկ Դուիմի 551 թ. ժողովը մուրաւած է եղել դարձեալ մետոքականութեամբ դատապարտումին, եւ մրան վերաբերող փաստաթղթերում եւ այլ սկզբնաղբիւրներում ոչ մի բառ չկայ ֆազիկեղոնականութեամբ մասին (համեմատմանը տես՝ Մ. Օրմամեան, Ազգապատմ. § 369, 370):

«Տէր Գրիգոր :

«Տէր Զաքարիա :

«Տէր Դաւիթ :

«Տէր Յովհանն :

«Տէր Երեմիա : Դ սորա աւուրս արար զիր Աղուանից երանելին Մեսրոպ, որ եւ Վրաց եւ նշանազիր ջանիւ մեծաւ :

«Տէր Աբաս, որ ի սկզբան թուականիս Հայոց փոխեաց զաթոռ Հայրապետութեանն ի Չորայ ի Պարտաւ՝ կալեալ ամս քառասուն եւ չորս, յեպիսկոպոսութենէն Մեծիրանց կոչեցեալ : Առ սովաւ կալան սովորութիւն զրել ի պատրուակի (5) թղթոյն «Աղուանից, Լինաց եւ Չորայ կաթողիկոսի»...» (6) :

Ի՞նչ ազրիւրներից են քաղուած այս անունները եւ ի՞նչ սկզբունքով է կազմուած ցանկը : 10-րդ դարում պատմութիւնը շարայարող Մովսէս Դասխուրանցին ոչինչ չի ասում այս առթիւ : Երբ պատմութեան նախորդ էջերում բազմիցս դանդատուել էր, թէ անօրէններն ու բարբարոս ասպատակիչները հրկիղել են վանքերն ու եկեղեցիները, կտակարաններն ու սրբազան միւս զրքերը, եւ տեղեկութիւններ չկան Աղուանքի հին օրերի դէպքերից ու դէմքերից, բացի այն կըցկտուր տուեալներից, որ պարունակում են յայտնի պատմիչները երկերը : Այսպէս թէ այնպէս, շարայարողն իրեն յայտնի բոլոր տուեալները տեղադրել է պատմութեան հիւսուածքի մէջ, եւ, ընտանաբար, մենք կարող ենք սոսկ այդ տուեալները քննելով էլ շօշափելի եզրակացութեան յանգել կաթողիկոսաւարի մասին : Այդ տուեալները մէջ Թադէոս անաքեալի աշակերտ Նիլըն միայն քարոզիչ է ու նահատակ եւ՝ երբեք կաթողիկոս (7) : Հետեւապէս ոչ մի հիմք չկայ Աղուանից կաթողիկոսութեան սկիզբը մեր թուականութեան առաջին դարից սկսելու :

Երկրորդ անունը Գրիգոր Լուսաւորչի թոռ Գրիգորիսինն է :

5. Աղուանից Աշխարհի Պատմութեան քիֆիսեամ (1912) ու մոսկովեամ (1880) հրատարակութիւններում սպազրուած է զպարուակիք, իսկ Գռչի վերոյիշեալ ժամանակագրութեամ մէջ (էջ 384)՝ «պարսիսակիք» ձիշոք զպարուակիքն է (տես՝ Փարիզի հրատարակութիւն, Բ. հտր., 1880, էջ 72) : «Պատրուակ» նշանակում է ֆոլ, ծածկոյթ, նաեւ ծրար (տես՝ Հր. Աճառեան, Հայերէն Արամատական Բառարան, Ե. հտր., Երևան, 1931, էջ 951 : Ս. Մալխասեանց, Հայերէն Բացատրական Բառարան, Գ. հտր., էջ 75) :

6. Մ. Կազանկատուացի, Պատմութիւն Աղուանից Աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 391-392 :

7. Նոյնը, էջ 16-17 եւ հոգ. :

Նրա մասին մատենագրական բաւականին տեղեկութիւններ կան, եւ դրանց հիման վրայ կարող ենք պարզել, թէ որքան իրաւացի է շարայարողը, երբ «զմանուին Գրիգորին» համարում է կաթողիկոս :

Վերը՝ Խորենացու տեղեկութիւնից իմացանք, որ նորահաւատ Հայաստանի հիւսիս-արեւելեան նահանգների աշխարհիկ տէրերը Տրդատ Թաղաւորի մօտ են դնացել ու խնդրել, որ նա իրենց կողմերի համար նշանակի «եպիսկոպոս ի զաւակէ սրբոյն Գրիգորին» (8) : Եւ ահա Տրդատն էլ նրանց կողմերի եպիսկոպոս է առաքել Գրիգորիսին : Յայտնի է նաեւ եպիսկոպոսական աթոռանիւտը՝ Ամարաս աւանը Փոքր Սիւնիք կամ Արցախ նահանգի Միւս Հարանդ զաւառում (9) : Ուրեմն, Գրիգորիս եպիսկոպոսը նշանակուած էր Արցախի թեմի առաջնորդ :

Այդ հետագայում, ամենայն հաւանականութեամբ՝ Հայոց ու Վրաց եկեղեցիների բաժանման խառնակ օրերին է եղել, որ միութեան ու միասնութեան նախանձախնդիր Հայ հոգեւորականները, Հայոց, Վրաց ու Աղուանից եկեղեցիների կապերի համար հին յիշատակներ որոնելիս, յօրինել են նաեւ մի աւանդութիւն, որի համաձայն՝ Գրիգոր Լուսաւորչից սերուած Գրիգորիսը ոչ թէ Արցախի եպիսկոպոսն է եղել, այլ կաթողիկոս Վրաց ու Աղուանից : Եւ հենց այս աւանդութիւնն է, որ ըստ երեւոյթին հետագայում մուծուել է նաեւ Փաւստոսի պատմութեան մէջ՝ Գրիգորիսին հռչակելով կաթողիկոս... «կողմանցն Վրաց ու Աղուանից» (10) :

Կաթողիկոսաւարի մէջ Գրիգորիսին (4-րդ դարի առաջին կէս) անմիջապէս յաջորդում է Եռուհաղիչան (5-րդ դ. Վերջ), որի տեղն այնպէս անյարմար է թուացել նոյնիսկ Կիրակոս Գանձակեցուն :

8. Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, Տփղիս, 1913, էջ 250 :

9. Մ. Խորենացի, էջ 260 : Փաւստոս Բիւզանդ, *Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1912, էջ 23 :

10. Փ. Բիւզանդ, էջ 21 : Մ. Բրոսսէմ բննական ուշադրութիւն է դարձրել Փաւստոսի պատմութեան մէջ մտած այս մաթաղաւարտեան վրայ եւ, մաթաղաւարտեանում որ Գրիգորիսի եպիսկոպոսութեան տարիներին վրաստամն իր եկեղեցու սեփական գլխաւորն ունէր, հաւանական էր համարում թէ վրաստամ անելով մեր ազգիւրը հասկանալի պիտի լինէր ոչ թէ բուն վրաստամը, այլ այդ երկրի այն մասը, որ մերք-Հայքին էր պատկանում, մերք Վիրքին, այսինքն՝ Սոսիսքը եւ այն երկրամասը, որ հետագայում կոչուեց Կախք (M. Brosset, *Histoire de la Georgie*, t. I, St. Pétersbourg, 1849, p. 194) : Սակայն Փաւստոսի լրմնա ընթերցողը չի կարող չնկատել, որ հերիմակը Վիրք անելով չի կարող հասկանալ Սոսիսք կամ Կախք, իսկ Ազուամքի վերաբերեալ էլ այն կարծիքին է, թէ նրա տարակնգու

Մենք արդէն առիթ ունեցել ենք քննելու Շուխհաղիչայի ինքնութիւնը եւ Հնեց Աղղուանից Աշխարհի Պատմութեան» տեղեկութիւններէ հիման վրայ պարզել ենք, որ նա եղել է Պարտաւի եպիսկոպոս եւ ոչ թէ Աղղուանից կաթողիկոս (11): «Պատմութեան» մէջ, կաթողիկոսաւար-ցանկից առաջ, Շուխհաղիչան երկու անգամ յիշատակուած է իր տիտղոսով, մէկ՝ երբ նա Վաչազան Բարեպաշտի հետ մասնակցուած էր Գրեղորիսի նշխարներէ դիւտի աթիւր կազմակերպուած արարողութիւններին, մէկ էլ՝ Աղղուանի ժողովին նրա մասնակցութիւնն արձանագրելիս:

Առաջին դէպքում Շուխհաղիչան, իբր, աւազ եպիսկոպոսապետ («Եւ առեալ թաղաւորին ընդ ինքեան զաւազ եպիսկոպոսապետն Շուխհաղիչոյ զնայր») (12), երկրորդ դէպքում՝ «արքեպիսկոպոս Պարտաւայ» (13): Պարզ երեւում է, որ Վաչազանին վերաբերող պատմութիւնն իր երկի մէջ առնելիս շարայարողը Շուխհաղիչայի տիտղոսի վերահաստեութիւններ է կատարել՝ առաջին դէպքում «եպիսկոպոսնին աւելացնելով պետքը, երկրորդում՝ «արք»ը: Աւազ եպիսկոպոսը՝ հասկանալի է. հնարաւոր է, որ Պարտաւի եպիսկոպոսը որոշ առանձնաշնորհումներ ունեցած լինէր երկրամասի միւս եպիսկոպոսների հանդէպ, որի շնորհիւ էլ նրան՝ կոչէին աւազ: Վերջապէս, չենք կարող մոռանալ, որ խօսքը Վաչազանի թաղաւորութեան ժամանակին է վերաբերում, մարզպանութեան շրջանին; երբ Աղղուանքի մարզպանութեան մէջ մտնող Հայկական նահանգները վարչական ու հոգևոր տեսակէտներից անջրպետուած էին մայր երկրից, եւ այդ նահանգների հոգևոր կեանքը մի ընդհանուր շրջանակի մէջ պահելու համար եպիսկոպոսներից մէկը կարող էր «աւազ» դառնալ: Սակայն աւազ եպիսկոպոսապետն» անիմաստ է, անհմուտ ձեռքով սարքուած:

Այդպէս է նաեւ արքեպիսկոպոս Պարտաւայ» յորջորջումը: Արքեպիսկոպոսը կը լինէր «Աղղուանից» եւ ոչ թէ «Պարտաւայ»: Իր

խառնիճազամն ցեղերը Գրիգորիսի եպիսկոպոսութեան օրերում դեռեւս այնքան ամալաբարք են եղել քրիստոնէութեան, որ չէին կարող ունենալ ոչ կաթողիկոս, ոչ էլ մայրիակ եպիսկոպոս: Նրանք կարիք ունէին միայն քարոզչի, որին եւ մտախալեցին իրենց Իրկրի մէջ՝ վատեմեան դաշտում:

11. Բ. Ուլուբաքեան, Գարձեալ Աղղուանի ժողովի Գումարման Տարեթուի Մասին, «Էրպոսի Հասարակական Գիտութիւնների», (Երեւան), 1969, քիւ 6, էջ 55-56:

12. Մ. Կազամկատուացի, էջ 92:

13. Նոյնը, էջ 98:

ցանկի խորագիրն արգարացնելու համար շարայարողն այստեղ էլ շարքն է աւելացրել՝ Պարտաւի եպիսկոպոսի տիտղոսի ազաւազման դնով:

Յաջորդ ինն «կաթողիկոսներէ» անունները (Մատթէոս, Սահակ, Մովսէս, Պանդ, Ղազար, Գրիգոր, Ջաքարիա, Դաւիթ, Յովհանն) միայն անուններ են եւ իրենց գոյութիւնը ոչնչով չեն արդարացնում ոչ «Աղուանից Աշխարհի Պատմութեան» մէջ, ոչ էլ ուրիշ աղբիւրներում: Իսկ եթէ նկատի ունենանք նաեւ այն հանգամանքը, որ այդ անունները շարուած են Շուփհաղիշայից (5-րդ դ. վերջ — 6-րդի սկիզբ) յետոյ եւ Երեմիայից (5-րդ դ. սկիզբ) առաջ, ապա պարզ կը լինի, թէ որքան անուրջ վիճակում են գտնուած նրանք՝ իրենց չունեցած «կաթողիկոս» տիտղոսով (14): Ն. Ակիւնեանը փորձել է իննից մէկի՝ Գրիգորի պատմականութիւնը հաստատել Արաս կաթողիկոսի՝ Յովհաննէս Բ-ին դրած պատասխան թղթով, որ յիշում է. «Երանելի եպիսկոպոսն, որ յառաջ քան զիս՝ Պետրոս եւ Գրիգոր այսպէս ասէին...»: Մէջբերելով սոյն նախադասութիւնը, Ն. Ակիւնեանն իրաւամբ մտածում է, որ խօսքն Արասին նախորդած պաշտօնակիցներ յասին է, եւ գտնում է, որ «այս երկու անուններէն երկրորդն ունինք ցանկիս մէջ, Թ. 8, եթէ կարելի է նոյնացնել» (15): Սակայն, դժբախտաբար, գիտնականը չի նկատել, որ մէջբերուած նախադասութեան մէջ Պետրոսն ու Գրիգորը եպիսկոպոսներ են եւ ոչ կաթողիկոսներ:

Յաջորդ անունը Երեմիայինն է, մեր մատենադրութեան մէջ սկզբնապէս յիշատակուած ականատես ու քաջատեղեակ հեղինակի կողմից, որի վկայութիւնն էլ բաւական է հարցը վերջնականապէս

14. Կիրակոս Գամակեցիցի, երեւի այս անունները հիմնաւոր դարձնելու նպատակով ցանկում վերագասաւորութիւններ է կատարել, անուններից իրաքմանչլիւրիւ, չգիտես որտեղից, գահակալութեան տարիները նշանակել: Եւ այսօրին յետոյ ցանկի անվաւերակամութիւնը դարձել է առաւել ցայտում (տես՝ Կ. Գամակեցի, էջ 194—195): Այնտեղ, օրինակ, Եղիշէի եւ Գրիգորիսի միջեւ հինգ անուններ են տեղադրուել՝ իրենց գահակալութեան քուերով (պարզ է՝ երկու դարի պարապը լցնելու համար), իսկ Երեմիայիմ էլ (400—430 թթ.) ամբիբապէս յաջորդում է Արսար (552—596 թթ.): Այսպիսով, իմէք՝ կիրակոս պատմիչը, մի նուփեաղիշայի տեղի ամհամոզութեամ դէմ դժգոհելով, խառնել է միւսները, դարձրել ամբիբակամ ու առաւել ամհամոզիչ մի անուամշար:

15. Ն. Ակիւնեան, Էջ. աշխ., էջ 156. քաթի հրատարակութիւնը տես՝ G. Garitte, *La Narratio de Rebus Armeniae*, Louvain, CSCO., 1952, p. 38.

լուծելու համար: «Պատմութեան» մէջ թիւրիմացութիւն չկայ Երեմիայի ցուցիչի տեսակէտից. դա այն Երեմիան է, որի օղնութեամբ Մեսրոպ Մաշտոցը գիր ստեղծեց Աղուանքի համար: Իսկ այստեղ մեզ համար գերազույցն դատաւոր կարող է լինել միայն Մաշտոցի կենսագիր Կորիւնը: Նա հնարաւոր մանրակրկիտութեամբ տեղեկացնում է Մաշտոցի՝ բուն Աղուանքում կատարած դործի մասին: Մաշտոցին դիմաւորել էին Չողում, Մազբուտ (Աղուանից) Արշակունի թաղաւորների դահանխատում: Եթէ այդ ժամանակ Աղուանքը կաթողիկոսական աթոռ էլ է ունեցել, ապա այն պէտք է լինէր Չողում: Եւ այս աթոռի դահանխայն էլ պէտք է լինէր Մաշտոցի օչնականը: Այսքանի մասին Կորիւնը հետեւեալն է հաղորդում. «Եւ երթեալ (Մաշտոցը — Բ. Ու.) իջանէր յաշխարհն եւ հասեալ ի թաղաւորական տեղիսն, տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կոչէին, եւ զնոցին թաղաւոր, որում Արսիաղ էր անուն...» (16):

Ժամանակակից միակ աղբիւրը՝ Կորիւնի գիրքը, Երեմիային դիտէ իբրեւ եպիսկոպոսի:

Սրանից յետոյ արդէն դատողութիւններն աւելորդ են:

Երեմիան, ուրեմն, Մաշտոցի ժամանակակիցն է եղել: Իսկ յաջորդ անունը Արսան է, աթոռակալած 552-596 թթ.: Ընդմիջումն աւելի քան մէկ դար է, մի ժամանակաշրջան, որ յայտնի է քաղաքական բարդ իրադարձութիւններով: Հենց միայն 428 թ. ստեղծուած «Աղուանք» մարզպանութեան փաստը բաւական է՝ պատկերացնելու համար քաղաքական, հասարակական-տնտեսական ու հոգեւոր-մշակութային այն դժուար կացութիւնը, որին ենթարկուեցին մայր երկրից կտրուած ու մարզպանութեանը ենթարկուած հայկական երկու նահանգները՝ Ուտիքն ու Արցախը:

Մենք չափազանց քիչ տեղեկութիւններ ունենք այդ մարզերի եւ յատկապէս բուն Աղուանքի նախամարզպանական շրջանի եկեղեցական դործերի մասին: Եղել են եպիսկոպոսութիւններ եւ նրանք ենթարկուել են Հայոց կաթողիկոսութեանը: Այդպէս է եղել հայկական նահանգներում, անշուշտ՝ նաեւ բուն Աղուանքում: Մեսրոպ Մաշ-

16- Կորիւն, Վարք Մաշտոցի, Երեւան, 1941, էջ 70 (ընդգծումը մերն է. Բ. Ու.): Այս տեղեկութիւնը միայն Կորիւնից քաղած մեր հետազոյի պատմիչների երկերում արդէն չեպիսկոպոսը յամիրաւի դարձել է չեպիսկոպոսապետս կամ շաղիկոսս, որ, հաւանաբար, պէտք է բացատրել «Աղուանից Աշխարհի Պատմութեան» աղբիցութեամբ: Նախըմքացի մտանցաբան աղբիւրներում (օրինակ, Մ. Խորենցի, էջ 329) մտան փոփոխութիւնը կարգ էր կատարուել միայն հետագայում, գրչական-խմբագրական միջամտութիւններով:

տոցին խոնարհարար ընդունեցին ու ցոյց տուեցին ամենայն օժանդակութիւն բուն Աղուանքի Չող ու Բաղասական մարզերում, առաջին Հերթին, իրբու հայոց եկեղեցու եւ նրան դերագոյն նուիրապետութեան ներկայացուցչի: Սա այլ բան չի նշանակում, քան այն իրողութիւնը, որ բուն Աղուանքի եկեղեցական թեմերը ենթարկուած էին Հայոց կաթողիկոսութեանը:

Չպէտք է կարծել, թէ մարդպանութեան առաջին տասնամեակներում քրիստոնէական եկեղեցին բարօք վիճակում է եղել բուն Աղուանքում, կամ՝ թէկուզ եւ նրա մէջ մտնող հայկական նահանգներում: Պարսից քաղաքական ազդեցութեան ուղեկցութեամբ այդ մարզն էին թափանցել ինչպէս կոսպալտութիւնը, այնպէս էլ զանազան աղանդներ, որոնց մասին բացայայտ տեղեկութիւններ է թողել Վաչագան Բարեպաշտի ժամանակագիրը: Ըստ նրա պատմածնների, որոնք իրենց հիմնական մասով արժանի են վստահութեան, պարզուած է, որ պարսից տիրապետութեան առաջին շրջանում բուն կերպով մոզութեան են դարձել ոչ միայն հասարակ մարդիկ, այլեւ ազատներն ու նախարարական տներէ ներկայացուցիչները («...նախարարս, որք միանդամ մոզութեամբն աղտեղացուցեալ էին դժողւոյն խոհականութիւն դիցն դարչելի պաշտամբ եւ զմարմինս պղծալից պոռնկութեամբ խենեշացեալ...» (17):

Յազկերտ Բ.ի դժամն ժամանակն էր այդ, պարսկական արքունիքի վարած քաղաքական ու կրօնական ամենածանր ճնշման շրջանը, որի բնական արդիւնքը եղաւ Վարդանանց ազատագրական շարժումը՝ Աւարայրի սրբազան ճակատամարտ-վերջարանով: Աւարայրից յետոյ էլ աւելի քան երեսուն տարի մարդի անիշխանութեան պայմաններում իր հողեվարքն էր ապրում քրիստոնէական եկեղեցին: Եւ միայն Պերողի մահից յետոյ, Վաղարշի (484-488 թթ.) հանդուրժողական քաղաքականութեան շնորհիւ քրիստոնէութիւնը վերստին դբաւեց իր դիրքերը, Վաչագանի կտրահանի միջոցառումներով արձատուորուեց, հաւանարար դուրս մղելով միւս բոլոր ազանդներն ու Հերձուածութիւնները: Դարձեալ Վաչագանի ժամանակադրից ենք իմանում այդ աղանդների անունները՝ մասնահատութիւն, դեղատուութիւն, դիւսպալտութիւն եւ այլն (18), որոնց դէմ Վաչագանն ու նրա գործակալները պայքարեցին ամենամոզող դժամութեամբ:

Արցախն էր Վաչագանի միջավայրը: Արցախեան Առանշահիկ

17. Մ. Կազմկատուացի, էջ 56:

18. Նոյնը, էջ 62-64:

նախարարական տան ներկայացուցիչն էր նա՝ Արցախամուր աշխարհին տիրելու ժառանգական իրաւունքով: Սակայն, օգտուելով քաղաքական բարենպաստ պայմաններից, իր տիրապետութիւնը տարածեց նաեւ Հայարնակ միւս դաւառների վրայ (Ուտիք, Կամրեման) եւ ամբողջ այդ տարածքում էլ կարողացաւ իրականացնել իր քրիստոնէական ու քաղաքական բարենորոգչութիւնները: Այս առթիւ եւս ժամանակագիրը թողել է ստոյգ վկայութիւն. «Հրաման տայր այնուհետեւ Արցախամուր աշխարհին յիւրում ծառայութեանն ի բաց լքանել թողուլ զգիւսպաշտութեան կարգս կարգս զաղտեղի դիցն զոճամատոյց պաշտամունս. յոյժ բարեմիտ եւ աշխարհաչէն եւ խաղաղաւէր եւ հրամանատար ամենայն կողմանց իւրոյ թաղաւորութեանն, զորոց շարին Պիւղղի վթաղաւորութիւնն հանեալ էր եւ իշխանաց զրնիկ իշխանութիւնն բարձեալ՝ անդէն առ իւրաքանչիւրսն դարձուցանէր զոչրութիւնն» (19):

Վաչագան Բարեպաշտի հաւատանպաստ եռանդուն քայլերից առանձնայատուկ ուշադրութեան են արժանի եկեղեցիների ու վանքերի բուն շինարարութիւնը, սրբերի շարքն անցած հայ հոգեւոր ու մշակութային զործիչների մասունքների զիւտերն ու այդ զիւտերի շուրջ ծաւալած համաժողովրդական ցնծաղին արարողութիւնները («եւ յօր աւուր յսրբորելով յաստուածասէր պաշտամունս՝ անձանձրոյթ յիշատակս սրբոց կատարէր») (20) եւ այլ միջոցառումներ, որոնց նպատակն էր բարձրացնել հայ քրիստոնէական եկեղեցու վարկը, արմատաւորել նրա նուաճումները, եկեղեցու օժանդակութեամբ ամրապնդել իր նորաստեղծ թաղաւորութեան հիմքերը: Այստեղ էլ ժամանակի հայ քաղաքական ու հոգեւոր կեանքի ընդհանուր մակարդակի վրայ բարձրանում են Վաչագանի ընդունած «Սահմանադրութիւն Կանոնական» անունով յայտնի կանոնները, որոնք առաւել պէտք է ամրապնդէին երկրամասի քաղաքական ու կրօնական հաստատութիւնների հիմքերը:

Վաչագանի դործունէութեանը վերաբերող աղբիւրը («Պատմութիւն Աղուանից Աշխարհի» Ա. դրքի դլ. ԺԶ.—դլ. ԻԶ.), հանդամանօրէն ներկայացնելով իր հերոսի եկեղեցաչէն դործի բոլոր մանրամասները, ցոյց է տալիս թէ ինչպէս նրա թագաւորութեան ներքոյ դանուող եկեղեցիների հետ հաշտ ու համերաշխ են նաեւ անդրկուրեան կամ բուն Աղուանքի թեմերը: «Սահմանադրութիւն Կանոնական» ընդունելու համար Աղուենում գումարուած ժողովին ներկայ

19. Նոյմը, էջ 57:

20. Նոյմը:

էին միայն Արցախի եւ Ուտիքի աշխարհիկ տէրերը, իսկ հողերը առաջնորդներ էին ժամանել ոչ միայն յիշեալ Հայաշխարհից, այլեւ բուն Աղուանքի այնպիսի թեմերից, ինչպէս Կապադակիը, Հաշուն, Յոխն եւ այլն (21) : Այս պայմաններում անգամ ոչ մի խօսք չկայ հողերը կեդրոնացուած դեկլարութեան, այսինքն՝ կաթողիկոսութեան մասին : Այդ պարագան իսպառ բացակայում է նաեւ ժամանակի ամենակարեւոր փաստաթղթի՝ Վաչագանի կանոնների մէջ : Այստեղ արտայայտութիւն են դտել եկեղեցու պաշտօնական բոլոր աստիճանները՝ քահանայից մինչեւ եպիսկոպոս, սակայն ոչ մի ակնարկ կաթողիկոսի (կամ նրա դերը կատարող ոեւէ այլ տիրոջաւոր պաշտօնեայի՝ արքեպիսկոպոս, եպիսկոսպետ, Հայրապետ, պատրիարք եւ այլն) մասին : Եկեղեցական կեանքի ամենարարձրագոյն դերը, ամենապատասխանատու վճիռներ հանելու իրաւունքը վերապահուած է եպիսկոպոսին, մի ճշմարտութիւն, որ իր դրսեւորումն է դտել Վաչագան Բարեպաշտի «Սահմանադրութեան» Ա., Ը., Ժե., Ժէ., Ի., ԻԱ., կանոններում (22) : Վերջում էլ արձանագրուած է. «Ձայս պայման արարին եպիսկոպոսքն եւ քահանայք եւ ազատ մարդիկ առաջի արքային, թէ ի մեր եպիսկոպոսաց եւ յերիցանց եւ յեկեղեցոյ բերանոյ՝ օրհնեալ եղիցի թագաւորն թագուհեան եւ դաւականն հանդերձ...» (23) :

Նման փաստաթղթի մէջ ոչ մի դէպքում եւ ոչ մի կերպ չէր կարող անուշադրութեան մատուցել կաթողիկոսի անունը : Եւ այստեղ էլ այն չկայ : Հետեւապէս կատարելիք միակ եզրակացութիւնն այն է, որ ո՛չ Վաչագան Բարեպաշտից առաջ եւ ո՛չ էլ նրա օրերում Արցախ-Ուտիքեան Հայաշխարհում ու բուն Աղուանքում կաթողիկոսութիւն չի եղել :

Սակայն չի կարելի մոռանալ, որ մարդպանութեան դարն էր այդ, Հայաստան աշխարհի քաղաքական մասնատուածութեան շրջանը : Դուրիւմ նստող հողերը նուիրապետը չէր կարող իր մշտական ու անթարթ հայնացքի տակ պահել Արեւելեան Հայաստանից

21. Նոյնը, էջ 98 :

22. Նոյնը, էջ 98-102 :

23. Նոյնը, էջ 103 : Այս համգամաճճ իմֆօնի ապացուցում է որ «Սահմանադրութիւն Կանոնակաճճ»-ի ներածակամում «Շուփիադիչայ եպիսկոպոս Պարտաւայ»-ը հետագայում Մոսկու Դասխարանցու կաթողիկոսաշարի ազդեցութեամբ է դարձել «արքեպիսկոպոս Պարտաւայ» : Հակառակ դէպքում այդ «արքեպիսկոպոս» տիտղոսն ու պաշտօնն ամպայման արտայայտութիւն կը գտնէին ընդունուած կանոններում եւ եզրափակիչ խօսքում :

կազմուած մարզի սահմաններից դուրս դտնուող եւ մի այլ մարզպանութեան մէջ մտնող այն նահանգների հողեւոր թեմերը, որոնք իրենք ամէն անգամ առիթ էին փնտռում անջատուելու, ինքնուրոյն ու ինքնաշարժութեամբ վարելու իրենց կեանքը:

«Աղուանից Աշխարհի Պատմութեան» տուեալների համաձայն՝ այս վիճակի արդիւնքն այն է եղել, որ հայկական թուականութեան առաջին տարում (552 թ.) Աղուանք մարզպանութեան տարածքի հողեւոր թեմերը միաւորել ու ստեղծել են իրենց նուիրապետութիւնը, որի դահակալը կոչուած էր «կաթողիկոս Աղուանից, Լիւնաց եւ Չորայ» (24):

Աղուանք մարզի ինքնուրոյն հողեւոր նուիրապետութիւնը ժամանակի հրամայական սահմանն էր: Առանց նրան անասելի ծանր պէտք է լինէր հայկական նահանգների թեմերի վիճակը, քանի որ, կտրուած Ամենայն Հայոց կաթողիկոսութեան ամենօրեայ հսկողութիւնից, այդ թեմերը ենթակայ էին ամէն տեսակ վտանգների: Մի դար առաջ տեղի էր ունեցել Քաղկեդոնի ժողովը, որի հեղինակներն ու կողմնակիցները որս էին փնտռում այդ ժողովի նորմերը չընդունած եկեղեցիների ոլորտում: Անպաշտպան, անօղնական մնացած Ուտիքի ու Արցախի եկեղեցիներն ամենայն դիւրութեամբ կեր պիտի դառնային քաղկեդոնականութեանը: Իսկ դրանից յետոյ արդէն ոչ մի դժուարութիւն չէր ներկայացնի նաեւ հայ բնակչութեան ուժացումը:

Ստիպան Աղուանք մարզի թեմերը՝ ե՛ւ հայկական, ե՛ւ բուն աղուանական, արդէն մերժել էին Քաղկեդոնի ժողովն ու վերջինիս հետ համերաչխ նեստորականութիւնը: Նորադոյն ուսումնասիրութիւնների համաձայն՝ այդ կատարուել է սկսած 480-ական թուականներից, երբ հայերէն թարգմանուեց Տիմեթէոս Կուզի «Հակաճառութիւնը», ստեղծուեցին քերթողահայր Մովսէս Սորենացու, Յովհան Մանդակունի կաթողիկոսի թղթերը եւ հակաքաղկեդոնական այլ նւթեր, որոնց առկայութեամբ արդէն հայկական եկեղեցին վճռականօրէն սահմանադատուեց քաղկեդոնական կամ երկարակ վարդապետութիւնից:

Աղուանքի պատմութեան համաձայն՝ հայ թուականութեան առաջին տարում, 552 թ., կազմուել է «Աղուանք» մարզպանութեան տարածքի թեմերն ընդգրկող կաթողիկոսութիւն, որի դահական է դարձել Արցախի Մեծառանք դաւառի եպիսկոպոս Աբասը: Աբասը դահ էր հաստատել Պարտաւում եւ իր համար ընդունել հետեւեալ տիտղոս-

որ՝ «կաթողիկոս Աղուանից, Լիֆնաց եւ Չոզայ» (25) : Նշուած տեղանուններով, տիրադոսն իր տակ էր առնում ամբողջ՝ մարդպանութեան տարածքը, այն ժամանակներում Աղուանք էր կոչուում աշխիհնակի հայկական երկու մարզերի տարածքը : Հնուց ի վեր Լիֆնիք էր կոչուում ձախափնիակի կամ բուն Աղուանքի արեւմտեան մասը, իսկ Չոզ՝ նոյն բուն Աղուանքի արեւելեան մասը (26) :

«Աղուանքի Պատմութեան» շարադրողը պնդում է նաեւ, թէ Արասը եղել է Աղուանքի կաթողիկոսական դահլի ոչ թէ առաջին տէրը, այլ վաղուց դոյութիւն ունեցած այդ նուիրապետութիւնը Չոզ-Իերբենդից Պարտաւ փոխադրողը : Ուսումնասիրողների մեծ մասը, ինչպէս վերն ասուել է արդէն, հաւատում է այս յայտարարութեանը : Միայն Ն. Ալիքեանն է կասկածով վերաբերուել [«Թէ ինքը (Արասը) Ու. Ու.) Աղուանից նախապահական աթոռը ըի Չոզայ՝ Պարտաւ փոխադրած է, կը մնայ խնդրահան»] (27), չնայած հաւատում էր, թէ Արասից առաջ էլ Աղուանքը կաթողիկոսական դահ ու դահակներ է ունեցել (28) : Մէկ էլ Ս. Տ. Երեմեանն ու Մ. Ի. Արտամոնովն են, որ չեն հաւատում այդ կաթողիկոսութեան դոյութեանը՝ նախ քան Արասի աթոռակալելը (29) :

Վերը կատարուած քննութեամբ պարզեցինք, որ հիմնադուրի է Արասից առաջ, իբր թէ, դոյութիւն ունեցած Աղուանից կաթողիկոսութեան պնդումը՝ կաթողիկոսութեան առաջին դահակալ համարեն Նդիշէլ՝, թէ՞ Գրիգոր Լուսաւորչի թո՞՞ Գրիգորիսին : Հիմնադուրի է, որովհետեւ, նախ, աղբիւրները, ինչպէս տեսանք, երկրամասի հոդեւոր-եկեղեցական կեանքի միանդամայն այլ պատկեր են մեղ ներկայացնում : Եւ, երկրորդ, նոյն երկրամասի քաղաքական-վարչական կեանքը հոդեւոր նման նուիրապետութեան համար հոգ չէր կարող հանդիսանալ :

Արասը «Աղուանքի Պատմութեան» կաթողիկոսաշարի առաջին ներկայացուցիչն է, որին ճանաչում են նաեւ այլ աղբիւրներ : Այսպէս. ժամանակակից երկու եկեղեցական խոշոր դործիչներ նրան յղել են թղթեր, որոնց օղնութեամբ հնարաւոր է դառնում լրացնել Աղուանից աշխարհի պատմութեան հաղորդած տեղեկութիւնները՝

25. Նոյնը, էջ 133, 392 :

26. Բ. Ուլուբաքեան, «Այրասի», «Աղուանք» եւ «Առան» Տեղանունները, «Պատմա-Բանասիրական Հանդէս», (Երեւան), 1971, քիւ 3, էջ 122-124 :

27. Ն. Ալիքեան, Մոզէս Դասխուրանցի, էջ 161 :

28. Նոյնը, էջ 152-159 :

29. Ս. Երեմեան, Նշ. աշխ., էջ 324 : Մ. Ի. Արտամանով, Նշ. աշխ., էջ 124 :

Աբասի համեմատաբար ամբողջական կերպարն ստեղծելու համար :

Թղթերից մէկին ստորագրել են Յովհաննէս Բ. Գարեղեան կաթողիկոսը եւ Հայաստան մարզի մի շարք նահանգների եպիսկոպոսներ՝ հասցէագրելով «Աբասու Պարտաւայ եպիսկոպոսի, Մովսէսի Բախադատու եպիսկոպոսի, Գրիգորի Կապաղահայ եպիսկոպոսի, Հոռմկայ Ամբաստայ եպիսկոպոսի, Տիմոթէի Բաղասականոյ եպիսկոպոսի, Ամբակումայ Ծաքիոյ եպիսկոպոսի, Յոհաննէայ Գարդմանայ եպիսկոպոսի, Ղևոնդեայ Մեծկողմանց եպիսկոպոսի» (30) :

Աբասը «Պարտաւայ եպիսկոպոս» է կոչուած «Գիրք Թղթոց»-ում եւ «Աղուանից կաթողիկոս»՝ Աղուանքի պատմութեան՝ մէջ (31) : Մեզ թւում է՝ առաջին տիտղոսով է նա «չոյուած» այն պատճառով, որ Գուրինի կաթողիկոսներն սկզբնապէս սիրով չպիտի ընդունած լինէին Աղուանքում սկզբնաւորուող կաթողիկոսութիւնը : Հետագայում կը տեսնենք, որ հենց այս տիտղոսն ու տիտղոսի ուսմով ներկայացող յաւակնութիւնները միշտ էլ անհանգստացրել են Ամենայն Հայոց Հայրապետներին, եւ, բնականաբար, այդ հայրապետները միանգամից ու հաճոյքով պիտի չընդունէին ասպարէզ նստուած «կաթողիկոս Աղուանից, Լիմնաց եւ Չողայ» տիտղոսը :

Հետաքրքիր է, որ Աբասին կաթողիկոս չի կոչում նաեւ երկրորդ թղթի հեղինակը՝ Յովհաննէս Երուսաղէմացի եպիսկոպոսը, չնայած սա դոնէ սիրաչահելու համար պէտք է որ բաց չթողնէր նման առիթը : Նրա թղթում էլ Աբասը կոչուած է «եպիսկոպոս Աղուանից» (32) :

Սակայն «եպիսկոպոս Աղուանից» արտայայտութիւնն ինքնին արդէն կարեւոր նշանակութիւն ունի : Չէ՞ որ Աղուանք մարզը մէկ եպիսկոպոսութիւն չէր ներկայացնում, որպէսզի նրա Հայրապետն էլ կոչուի «եպիսկոպոս Աղուանից» : Մանաւանդ որ նախապէս Աբասը եղել է ոչ թէ բուն Աղուանքի որեւէ թեմի, այլ Արցախի Մեծառանք դաւառի եպիսկոպոսը : Նշանակում է, այդուամենայնիւ, թղթի հեղինակն ընդունում էր, որ Աբասն ամբողջ Աղուանք մարզի եկեղեցու ղլխաւորն է : Այս դէպքում Աբասը պէտք է ունենար նաեւ

30. Մ. Կաղանկատուացի, էջ 137-138: Գիրք Թղթոց, էջ 81: Ամմանուանքն ու տեղանունները, այլ ազբիւրների օժանդակութեամբ, տեղ-տեղ շտկելի ենք :

31. Տես՝ Մ. Կաղանկատուացի, էջ 137: Նոյնի փարիզի քրատարակութիւնը, էջ 224: Նոյնի ռուսերէմ քարգմանութիւնը, էջ 97:

32. «Արարատ», (Վաղարշապատ), 1896, էջ 252: Ն. Ալիմեան, Նշ. աշխ., էջ 188:

Համապատասխան տիտղոս, որ չէր կարող լինել «եպիսկոպոս»: Ուրեմն, նաև Հնարաւոր է մտածել, որ Թղթի հեղինակն այդ տիտղոսն էլ դրած պիտի լինէր, եւ Թերեւս հետագայում միայն Թղթի մէջ այդ տիտղոս կոչումը զրչական կամ խմբադրական շտման է ենթարկուել Աղուանից կաթողիկոսութեան յաւակնութիւնները շնորհունորների կողմից:

Ե՞րբ են գրուել վերոյիշեալ Թղթերը եւ ի՞նչ առիթներով:

Յովհաննէսի Թղթի մէջ թուական չի յիշուում, բայց պարզ է, որ եղել է հեղինակի դահակալութեան տարիներին՝ 557-574 թթ. միջև:

Առիթն Աղուանից թեմերը թափանցած նեստորական-քաղկեդոնական քարոզիչներն էին, որոնց նկատմամբ, հաւանաբար, Արատը ներողամիտ էր եղել: Եւ ահա Գուրինի կաթողիկոսն ու բնաշխարհի մի շարք եպիսկոպոսներ Աղուանք մարդի իրենց ազդակիցներին ու հաւատակիցներին գրում-ղուչացնում են, յանձնարարում ի բաց վանել չար որոմք, հայրենի հաւատը մաքուր ու անաղարտ պահել, ինչպէս անաջներում անում էին երկու կողմերի հաւատակից ու իրար հաւատարիմ հայրերը: Նամակի սկզբում հերձուածողները («դայլք յափըշտակողք զգեստիւք ոչխարաց») նեստորականներն են («զչար որոմն Նեստորի անարգելարար սերմանել ի հոգիս անմեղաց...») (33), սակայն վերջում բանադրական խօսք կայ ժամանակի այլազան հերձուածութիւնների դէմ. «Նմանապէս եւ մեք նզովիմք զհին դամենայն եղեալ հերձուածողն եւ զնորս, զՊօղոս Սամոսացի, զՄանի եւ զՄարիկոն, զնեստոր եւ զԹէոդորիտոս եւ զննտի չար ժողովն Քաղկեդոնի եւ զհրէական տումարն Լեւոնի, որք լրբարար յանդգնացան ասել երկու բնութիւնս եւ երկու դէմս ի վերայ միոյ Քրիստոսի Աստուծոյ...» (34):

Թղթի մէջ այս հերձուածութիւնները զնահատուում են որպէս Հայոց կողմից դատապարտուած ու մերժուած ազանդներ: Հասկանալի է, որ հենց նոյն ժամանակ Սիւնեաց եպիսկոպոսութեանը յղուած Թղթում առաւել պարզ նշուում է այդ մասին. «...եւ միարանութեամբ՝ զպիղծ Նեստորիանոսս, եւ զՔաղկեդոնիտս եւ զայլ հեր-

33. Մ. Կազամկատուացի, էջ 138-139: Գիրք Թղթոց, էջ 81:

34. Մ. Կազամկատուացի, էջ 141: Գիրք Թղթոց, էջ 83: «Աղուանից Պատմութեան» քիֆիսեան հրատարակութիւնից զուրս է մնացել ընդ զմնտի չար ժողովն Քաղկեդոնի եւ զհրէական տումարն Լեւոնի», որ կայ «Գիրք Թղթոց»-ում (էջ 83) եւ փարիզեան հրատարակութեամ մէջ (էջ 228):

ձուածողս ի մեր սուրբ եկեղեցւոյս, նորովիք Հալածական արարք...» (35) :

Այստեղ, անկասկած, խօսքը Դուինի 554 թ. ժողովի մասին է, որ վերստին մերժել է վերոյիշեալ ազանդները եւ ընդունել նոր կանոններ, որոնք աւելի էին ամրապնդում Հայոց միաբնակ եկեղեցու Հիմքերը: Ն. Ալիինեանը Համաձայն չէ յիշեալ թղթերում քաղկեդոնականութեան մասին եղած խօսքին եւ դրում է, թէ Դուինի «Այդ ժողովի դործը Հասած է մեղի. Հոն խօսքը խուժիկ-նեստորականներու, այսինքն՝ Պաղիկեաններու մասին է եւ որեւէ ակնարկութիւն չէ եղած «Քաղկեդոնիտներու եւ այլ Հերձուածողներու» մասին» (36) :

Սա թիրիմացութիւն է, քանի որ ժամանակի Հայ վարդապետների շուրթերին նեստորականութիւնը եւ քաղկեդոնականութիւնը Հնչում էին նոյն իմաստով, եւ այդ բառերից մէկի կամ միւսի բացակայութիւնը բոլորովին էլ չի նշանակում, թէ դոյութիւն է ունեցել բարեացակամ վերաբերմունք բացակայողի նկատմամբ: Վերը տեսնք, թէ ինչպէս Հայ վարդապետները բոլոր Հերձուածողներին՝ Պօղոս Սամոստացուց մինչեւ Լեւոնի տոմարի կողմնակիցները, դէտում էին իրբեւ երկրնակների, «որք լրբարար յանդգնեցան ասել երկու բնութիւնս...» :

Ի՞նչ եղաւ Յովհաննէս կաթողիկոսի թղթի պատասխանը :

«Աղուանից Պատմութեան» մէջ Հաստատում է, որ Աբարի օրօք խկապէս քաղկեդոնականութեան վարակը տարածուել էր նաեւ Աղուանքի թեմերում: Եւ երկրամասի Հողերու Հայրապետը, Յովհաննէս կաթողիկոսի թուղթն ստանալուն պէս, «յոյժ քննութիւն առնելով իւրով եպիսկոպոսօք, որք վերնադոյնդ կան ի զբի, նոքօք Հանդերձ Հալածեաց ի տանէն Աղուանից զվարդապետս կրօնին այնմիկ՝ դիժովմասն եւ զԵղիացն եւ զԲնոտն եւ զԻբաս եւ զայլս ընդ նոսին զմանողս նոցին արար տարարնակ ի Հեռաւոր վայրս: Եւ այնու եղեւ խաղաղութիւն ուխտի եկեղեցւոյ» (37) [Աղուանից] :

Ովքե՞ր են թովմասը, Եղիան, Բնոտը եւ Իբասը :

Կաթողիկոսի թղթում Աղուանքում խժժութիւն տարածող ազանդաւորները եկած են Համարում թի վանաց պղծոյն Պետրոսի, որ անուամբ աղքատասէր կոչին եւ դործովք քրիստոսատեաց եւ ուրացող զսուրբ Երրորդութիւնն...» (38) :

35. Գիրք Քղթոց, էջ 70:

36. Ն. Ալիինեան, Մովսէս Դասխուրանցի, էջ 183:

37. Մ. Կազամկատուացի, էջ 143:

38. Նոյնը, էջ 138: Սոյն հատումն այստեղ տպագրուած է աղաւաղ վիճա-

Որտե՞ղ էր գտնուում պիղծ Պետրոսի վանքը՝ նամակից ղժուար է որոշել: Մակայն հարցը պարզելուն օգնում է մի այլ նամակ, որ Արասին գրել է Երուսաղէմի եպիսկոպոսապետ Յովհաննէսը:

Այնտեղ թու՛մասը կամ թո՛վմասը Երուսաղէմի Պանդա վանքի կրօնաւոր է, եւ քանի որ այս վանքն էլ յայտնի է իրրեւ քրիստոնէական օրբանում գտնուող Աղուանից հողեւոր զլխաւոր կեղրոններէց մէկը (39), ապա թումասն իր պարտքն էր համարում կենդանի կապ պահպանել Աղուանից նորաստեղծ կաթողիկոսութեան հետ: Յովհաննէս հայրապետի սոյն թղթից իմանում ենք, որ նա յաճախ է այցելել Աղուանք, այնտեղի հողեւոր հայրերին է տարել Յովհաննէսին նախորդած երկու հայրապետներին՝ Մակարի ու Եւսեպիի թղթերը (անշուշտ՝ քաղկեդոնական յորդորներով): «Եւ ընկալար թուղթս երկուս ի Մակարայ եւ յԵւսեպայ ի ձեռն բարեպաշտի եւ աշխատասիրի թումասու, որ ոչինչ պէտս ունի ի ձէնջ պատուի եւ մեծութեան, բայց միայն ողոսց ձերոց փրկութեան», — իր թղթում հաղորդում է Յովհաննէս հայրապետը, ապա աւելացնում, որ իրեն եւս նա էր խնդրել՝ գրելու համանման թուղթ, որի համար էլ ահա գրում է. «Վասն որոյ զիս թախանձեաց գրել ըստ օրինակի նոցա...» (40):

Ն. Ալիքեանը, առանց աղբիւր նշելու, Յովհաննէս հայրապետի գահակալութեան սկիզբ է համարում 575 թուականը (41): Ուրեմն, նամակը կարող էր գրուել 575 թ.ից յետոյ: Այնտեղ խօսում է քաղկեդոնական վարդապետութեան այն քարոզիչը, որ լուր է առել Արասի հաւատի յեղյեղուկութեան մասին (բայց վասն զո երանութեանդ լուաք, եթէ կամակից ես բարւոյճ) եւ փորձում է նրան պոկել հայոց միաբնակութիւնից ու միաբանութիւնից: Մակայն որքան կարելի է դատել ղէպքերի հետագայ ընթացքից, Արասը չենթարկուեց քաղկեդոնական քարոզչի յորդորներին, «հալածեաց ի տանէն Աղուանից զվարդապետս կրօնին այնմիկ՝ ղթովմասն եւ զԵղիայն եւ զԲնտան եւ զԴրաս եւ զայլս ընդ նոսա զնմանողս նոցին արար տարանակ ի հեռաւոր վայրս» (42):

Այս տեղեկութիւնից կարելի է եղբակացնել, որ Երուսաղէմից եկածներին յաջողուեւ էր իրենց կողմը գրաւել տեղացիներից ոմանք,

կում, ուստի օգտուել եմք փաբիզեմ հրատարակութիւնից (էջ 225): Հատուածը պակասաւոր է մտել «Գիրք Թղթոց»-ում (էջ 81):

39. «Աբարատ», (Վաղարշապատ), 1896, էջ 255:

40. Ն. Ալիքեան, Մովսէս Դասխուրանցի, էջ 192:

41. Նոյնը, էջ 187:

42. Մ. Կազանկատուացի, էջ 143:

որոնց (զընժանողս նոցին») և Արասն արտաքսեց իր երկրից :

Ն. Ակինեանի կարծիքով, աներկրայելի է, որ Արասը յարել է քաղկեդոնահանութեան և չի միարանել հայոց հետ : Նրա այս թիւր տեսակէտը խարսխուած է հետագայ մի շարադրանքի վրայ, որի հաւաստիութիւնը առնուազն խիստ կարիք ունի ապացոյցի՝ մինչև ընդունելի դառնալը : Ահա շարադրանքի այն հատուածը, որ վերաբերում է Արասին ու նրա թեմերին : Իբր թէ 560-ական թուահաններէ հակապարսկական (Սուրէն մարզպանի դէմ) ընդվզումներից յետոյ հայերը, երբ ձախողուեցին Բիւզանդիայից խնդրած իրենց օղնութեան մէջ եւս, և Յովհաննէս Գաբղենեցի կաթողիկոսն էլ կոստանդնուպոլսում՝ բանակցութիւնների ապարդիւն աւարտին՝ կնքեց իր մահկանացուն, հայերին ոչինչ չէր մնում, քան վերադառնալ և հայրենի հողի վրայ սեփական ուժերով վճռել երկրի ճակատադրի հարցը : Ահա այստեղ էլ վերստին արծարծուած է հաւատի խնդիրը : Դուռնի կաթողիկոսութիւնից, իբր, զրում են Արասին՝ առաջարկելով՝ «Եկ, միարանեայ ընդ մեզ ի հաւատս. ասա՛ զմի բնութիւն Գրիստոսի Աստուծոյ և [յաւել] ի Սուրբ Աստուած անդր զմի խաչեցար վասն մեր : Այլ նա չա՛ն յանձն և անդրէն պատասխանի արար . Պետրոս և Գրիգորիոս (43), որք յառաջ քան զինն կացին, այսպէս ասէին . ե՛ւ ես ոչինչ յաւելից ի վերայ և ոչ բարձից ինչ ի բայ : Գրեցին զնոյն օրինակ և առ Վերս (և առ Սիւնիս) : Սակայն և նոքա յաճախազոյն ընդդէմ բարբառեալ՝ չառին յանձն . բայց միայն Ուտիք, այս ինքն դաւառք (կոչեցեալք) ըստ բարբառոյն Հայոց՝ Տաշիրք, Զորափոր, և Գարդմանք, և ոմանք յԱրձախայ [հաճեալ հաւանեցան]» (44) :

Անկասկած սա հետագայում յօրինուած ոչ վաւերական մի զրութիւն է, որի հեղինակը ձեռքի տակ ունեցել է Յովհաննէս Գաբղենեցի կաթողիկոսի թուղթը առ Արաս, որի մէջ խիստպէս խօսք կայ Գրիստոսի մէկ բնութեան և ռոր խաչեցար վասն մեր» մասին,

43. Յօրինողը ձեռքի տակ ունեցել է նաև Մովսէս Դասխուրամցու կաթողիկոսաշարք, բանի որ միայն այնտեղ է որ Գրիգոր յաբորդ (այսինքն՝ կաթողիկոս Աղուամից) կայ և այն էլ Նրեմիայից (Մաշտոցի ժամանակակից) երեք անուն առաջ : Բայց այդ չեղեալ հայրապետի օրօք ո՞վ էր եղիլ ժմաբանակ - երկարակնք վե՛մ յարուցողը՝ անհնար է պատասխան գտնել : Այստեղից, Դասխուրամցու երկի օգտագործման փաստից որոշակի երեւում է միայն յօրինման ժամանակը՝ 10-րդ դարից յետոյ :

44. Ն. Ակինեան, Մովսէս Դասխուրամցի, էջ 195-196 : «Համդէս Ամսօրեայ», (Վիեննա), 1953, էջ 470 :

ինչպէս նաեւ առաջարկ, որ Աբասի կողմից երեք կամ աւելի եպիսկոպոսներ զման Դուին՝ լսելու ըի մէնջ յանդիման զճշմարիտ վարդապետութիւն» (45) : Սակայն այս թղթի հանդամանքները նա վերադրել է մի այլ թղթի, որն, իբր, գրուել է Յովհաննէս կաթողիկոսի մահից (573/4) եւ հայերի Կոստանդնուպոլսից ձեւնունայն վերադառնալուց յետոյ : Բայց չէ՞ որ տուեալ հարցի համար առուել արժանահաւատ աղբիւրը՝ «Աղուանից Պատմութիւնը», հաղորդում է, որ Յովհաննէսի թղթից յետոյ Աբասը հաւաքել է իր եպիսկոպոսներին, քննութեան առել թուղթը, ապա հերձուածողներին ի բաց քշել ըի տանէն Աղուանից» (46) :

Եւ, վերջապէս, եթէ միաբնակութեանն էին յարում Ուտիքի հիմնական գաւառները՝ Տաշիր, Զորափոր, Գարդմանք, ճեւ ոմանք յԱրցախայ, ապա է՞լ ով մնաց, բուն Աղուա՞նքը : Դրա առթիւ արդէն ոչ մի տեղեկութիւն չունի անվաւերական թղթի յօրինողը : Հաւանաբար նա շատ ուշ շրջանի, այսինքն՝ այն ժամանակներէ մարդ է, երբ Աղուանից եկեղեցին հիմնականում իր թեւերի տակ ունէր աջակնայ նահանգները :

Քանի՞ եպիսկոպոսական թեմ ունէր նորաստեղծ Աղուանից կաթողիկոսութիւնը. աղբիւրադիտական տուեալների պակասութեան

45. Գրբբ թղթոց, էջ 83-84 : Մ. Կազանկատուացի, էջ 141-142 :

Կարծում եմք՝ գրչական սխալ կայ հետեւեալ հատուածի մէջ. «Արդ վստեղի ձեռնառակից էին հարցն մերոց, եւ դուք՝ մեզ, համոյ բուեցաւ զայ ի մէջ այսր եպիսկոպոսաց երկց կամ աւելեաց՝ լսելով ի մէջ յանդիման զճշմարիտ վարդապետութիւնն, զի մի ոք կորիցէ ի հովուաց կամ հօտից...» :

Թիֆլիսեան եւ փարիզեան երատարկութիւններում՝ «լսելով ի մէջ» փխւելովով ի մէջ» :

Ճիշդ չի հասկացուել մաեւ բարգամնիչների կողմից : Պատկանեանը վերջին մտքը ուսերէմի բարգամնի է այսպէս. «... ապա համելի էր լսել, քէ ինչպէս ձեռն կողմից եկած երեք կամ աւելի եպիսկոպոսները քարոզում էին ճշմարիտ վարդապետութիւնը (Մոսկուա, 1861, էջ 96-97) : Իսկ վ. Ասաֆլիսեանի բարգամնութեամբ՝ «... որ ձեռն կողմից եկան այս երեք կամ աւելի եպիսկոպոսները՝ մեզանից դէմ յանդիման լսելու... (Մ. Կազանկատուացի, Պատմութիւն Աղուանից Աշխարհի, քրգ. վ. Ասաֆլիսեանի, Երեւանի, 1909, էջ 95) : Մի՞նչդեռ պէտք է լինի. «Արդ, քանի որ ձեռն հայրերը իտատակից էին մեր հայրերին եւ դուք էլ՝ մեզ, [մեզ համար] համելի կը լինէր, որ ձեռն կողմից գային այս (այսինքն)՝ քրքի սկզբում բուարկուած, Բ. Ու.) եպիսկոպոսներից երեքը կամ աւելին՝ դէմ յանդիման մեզմից լսելու ճշմարիտ վարդապետութիւնը» :

46. Մ. Կազանկատուացի, էջ 143 :

պատճառով դժուար է որոշել: Ս. Տ. Երեմեանը, յենուելով բացառապէս Յովհաննէս Բ. Գարեղենեցի կաթողիկոսի թղթում յիշատակուած անուններէ վրայ, դտնում է, որ 7-րդ դ. սկզբին Աղուանից կաթողիկոսութեան ենթակայ ութ եպիսկոպոսութիւններ են եղել (47): Սակայն սա թիւրիմացութիւն է, որովհետեւ Յովհաննէս կաթողիկոսի թղթում յիշատակուած են Աղուանքի մի քանի եպիսկոպոսական թեմերի եւ ոչ թէ բոլորի առաջնորդները, ինչպէս որ հակառակ կողմից՝ բուն Հայաստանից էլ յիշուած են միայն տասնմէկ եպիսկոպոսներ: Թղթում թուարկուած ութ եպիսկոպոսական աթոռներից բացի, նոյն ժամանակներին վերաբերող աղբիւրներում յիշուած են, օրինակ, Մեծատանից թեմը, որտեղից էր ինքը՝ Արաւը (48), Գոշա թեմը, Դաղէ վանքը, բուն Աղուանքից՝ Չողը եւ այլն:

Ասեմք, որ միայն հայկական Աղուանքում կամ Արցախ-Ուտիք հայաշխարհում դոյութիւն ունեցած քան դաւաններից (ըստ Աշխարհացոյցի) իւրաքանչիւրը պէտք է ունենար իր եպիսկոպոսութիւնը: Տասնեակ թեմեր կային նաեւ Անդրկուրեան կամ բուն Աղուանքում: Նրանք բոլորն էլ ենթակայ էին վեցերորդ դարի Երկրորդ կէտի արշարլային կողմուած կաթողիկոսութեանը, որն էլ, իր հերթին, ենթարկուած էր Ամենայն Հայոց կաթողիկոսութեանը: Վերջինիս դահակալներն էին ձեռնադրում Աղուանքի հայրապետներին: Եւ զայսու կատնաւ կացին աշխարհն Հայոց եւ Աղուանից համակամ եղբայրութեամբ եւ անջակ ուխտիւ մինչեւ ցայսօր» — հաստատել է՝ «Աղուանից Աշխարհի Պատմութեան» վերջնական հեղինակը (գիրք Ա., դւ. Թ.): Իսկ Կիրակոս Գանձակեցին, նոյն աշխարհի ձեռնդր եւ հին օրերի լաւագոյն դիտակը, Աղուանքի բնակչութեանը ճանաչում էր որպէս «զազգայնոց եւ դճաւատակցաց մերոց», առաջնորդները՝ «հայալեզուք, հայերէնախօսք», եպիսկոպոսները, ապա եւ կաթողիկոսները՝ «ձեռնադրեալք ի սրբոյն Գրիգորէ եւ յաթոռակալաց

47. Ակնարկներ Գ-թ դդ. ՍՍՀՄ-ի Պատմութեան, էջ 324, էջտակի յընմմ է. «Գիրք Թղթոց»-ի էջ 81: Այստեղ ուսումնասիրողի կողմից Ամարասն տեղադրում է ժամանակակից Դիզակում (որպիսի տեղանուն չկայ) ու ել քէ Մարտունու շրջանում, Բազասկանը, որ գտնուել է կուրի ձախափնեակում, մոյթացնում է փայտակարանի կամ Բայլակամի հետ, որոմք տարբեր տեղանուններ են, առաջինը կապուած Արաքսի աջափնեակի, երկրորդը՝ ձախափնեակի հետ, Մեծկվեմէր, որ Թայրթառի վերին աւազանն է եղել, տեղադրուած է ժամանակակից Իջւանի շրջանում, որ մտնում էր Ուտիքի կազմի մէջ:

48. Մ. Կազմկատուացի, էջ 392-393. «Տէր Արաւ... Մեծիրանց յեպիսկոպոսութեանէն կոչեցեալ...»:

նորա»։ Բոլոր այս ի հիմանց հիմնաւոր պատճառներով էլ Կիրակոս պատմիչը գտնում էր, որ Աղուանից կաթողիկոսութիւնն իբրև կենդանի մարմին իր բոլոր բլեշներով կապուած ու մերուած է եղել Հաստանեայց Եկեղեցուն, ուստի եւ անփակտելիօրէն հիւսուած է նրա բազմադարեան պատմութեանը։

**PROBLEMS CONCERNING THE ESTABLISHMENT
OF THE (CAUCASIAN) ALBANIAN
CATHOLICOSATE**

BAGRAT OULOUBABIAN

(Summary)

One of the problems of the early medieval history of the Armenian people, which ought to be clarified, is the establishment of the Armenian ecclesiastical heirarchy in Albania. Despite the fact that some primary sources, and secondary literature speak of an independent Armenian church in Albania, with its independent catholicosate, founded in the first century of our era; historical documents come to prove that the Armenian catholicosate of Albania was founded in the middle of the fifth century, and the first catholicos was Abas (552-596). The historic evidence further proves that the Armenian catholicos of Albania was subordinate to the catholicos of all Armenians. Albanian catholicos were ordained by the supreme head of the Armenian church. It is a well established reality that the history of the Armenian church of Albania is an inseperable part of the history of the Armenian church as a whole.